



Պատմությունը

Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոնը (այսուհետ՝ **ՔՀԶԿ**) ոչ քաղաքական, ոչ կառավարական, շահույթ չհետապնդող կազմակերպություն է: **ՔՀԶԿ**-ն «Ղևոնդ Ալիշան» լուսավորչական-մշակութային ընկերության իրավաժառանգորդն է, որը հիմնադրվել է 1988թ. և գրանցվել է 1991թ: Կազմակերպության անդամները առաջատար գիտնականներ, մշակույթի գործիչներ և բուհական դասախոսներ են:

ՔՀԶԿ-ն կոչված է նպաստելու Հայաստանում քաղաքացիական հասարակության, ժողովրդավարության զարգացմանը, կանանց իրավունքների պաշտպանությանը, բազմակարծության զաղափարների, ինչպես նաև հայոց լեզվի և մշակույթի տարածմանը:

ՔՀԶԿ-ի կազմում գործում են. *Գիտնական կանանց խորհուրդ, Երիտասարդների խորհուրդ, Տարեց կանանց լիգա*

Երախտիքի խոսքեր

Կատարյալ ձևով կազմակերպված հայոց լեզվի և մշակույթի դասընթացները Սփյուռքին եզակի հնարավորություն են տալիս զարգացնել և ամրապնդել հարաբերությունները Հայաստանի հետ: Ես կցանկանայի արտահայտել իմ շնորհակալական խոսքը բոլոր մարդկանց, որոնք հաղթահարում են մեծ դժվարություններ կարողանում են կազմակերպել հիանալի ընտանեկան պայմաններ և կազմակերպել նման կրթական ծրագիր: Մենք հիշում ենք ուսուցիչներին, բնության գեղեցիկ տեսարանները, որոնք մենք այցելել ենք և ամենակարևորը՝ մեր սերը դեպի Հայաստան:

Յուրի Բագիրով, Ստավրոպոլ

Ես չեմ կարող գտնել բառեր՝ արտահայտելու իմ շնորհակալությունս Սվետլանա Ալանյանին՝ դժվարին աշխատանքի և հայերեն լեզվի նկատմամբ հոգածոթյան համար: Երախտապարտ եմ Ս.Ալանյանին՝ մեծահոգության և վստահության համար: Նրա աշխատանքը ներշնչում է հույս, որը օգնում է մարդկանց ապրելու:

Վալերի Հակոբյան, փոխտեսական Բաքվից

Ես կցանկանայի արտահայտել իմ շնորհակալությունը «Ղևոնդ Ալիշան» հայկական ընկերությանը, հատկապես Սվետլանա Ալանյանին, որը այս ծանր տնտեսական պայմաններում աշխատում է տարածել հայոց լեզուն և մշակույթը: Նաև շնորհակալ եմ Ռոմանոս Սահակյանին, որը օգնել է ինձ խորացնելու

հայ գրականության իմ իմացությունը: Ինձ համար, որպես ֆրանսիացու, կարևոր է սովորել ոչ միայն հայերեն, այլ նաև ծանոթանալ հայ մարդկանց:

**Յան Գալլե, Փարիզ, Ֆրանսիա
ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
Օգոստոս 2004**

ՔՀԶԿ-ն կազմակերպում է ամենամյա ամառային **Հայոց լեզու և մշակույթ** դասընթացներ (արևմտահայերեն և արևելահայերեն) 1991 թ:

Դասընթացները ունեն երեք մակարդակ՝ տարրական, միջին և խորացված: Ունկնդիրներին կառաջարկեն հետևյալ առարկաները՝ հայոց լեզու, հայ ժողովրդի պատմություն, հայ մշակույթ:

Ուսման ժամկետը օգոստոսի 2-ից – 15-ը Դասերը կանցկացնեն բարձր որակավորում ունեցող մասնագետները համալսարաններից և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայից Ունկնդիրներին առաջարկվում են նաև հանգստի և ժամանցի բազմաթիվ միջոցառումներ կլոր սեղաններ, հանդիպումներ անվանի հասարակական և քաղաքական գործիչների, դերասանների հետ, համերգներ և զբոսապտույտներ Ս.Էջմիածին, Գառնի, Գեղարդ, Սևանա լիճ և շրջագայություն Երևան քաղաքում:

Դասընթացների ունկնդիր կարող է լինել է 16 տարին բոլորած յուրաքանչյուր անհատ: Գիշերելու, սննդի, ուսման և մշակութային միջոցառումների արժեքը \$ 600 ԱՊՀ - ի քաղաքացիների համար՝ \$ 350

Վճարումը կատարվում է տեղում **Փոխտեսականների համար դասընթացներն անվճար են** Կենտրոնը կազմակերպում է նաև տարեկան անհատական դասընթաց առանց տարիքային սահմանափակման: Դասընթացի արժեքը - \$700 (գիշերելու, սննդի, ուսման և մշակութային միջոցառումների արժեքը ներառյալ): Վճարումը կատարվում է տեղում:

Կենտրոնն ընդունում է հայտեր ոչ միայն անհատներից, այլև ունկնդիրների խմբերից և պատրաստ է կազմակերպել տարեկան դասընթացներ խմբերին հարմար ժամանակ

Անվճարունակ անձիք կարող են կրթաթոշակի համար ըլինել **ՔՀԶԿ**-ի վարչություն

ԾՐԱԳԻՐ

Ժամանում

Ծանոթության երեկո

Ամենօրյա լսարանային պարապմունքներ 6 ժամ տևողությամբ՝ հետևյալ առարկաներից՝

| | |
|---------------------------------|----------------------|
| Հայոց լեզու | 24 ժամ / շաբաթական / |
| Հայ գրականություն | 4 ժամ / շաբաթական / |
| Հայ ժողովրդի պատմություն | 4 ժամ / շաբաթական / |
| Հայ մշակույթ և քաղաքակրթություն | 4 ժամ / շաբաթական / |

Քաց դասեր՝

ՀԳԱԱ Լեզվագիտության ինստիտուտում, դասախոս՝ ակադեմիկոս **Գևորդ Զահուկյան**

Մատենադարանում, դասախոս՝ ակադեմիկոս **Սեն Արևշատյան**

Հայաստանի պետական պատկերասրահում, դասախոս՝ արվեստագետ **Շահեն Խաչատրյան**

Երեկոյան ժամերին համերգներ, ներկայացումներ, հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ

Կիրակի օրերին Զբոսապտույտներ Էջմիածին, Գառնի, Գեղարդ, Սևանա լիճ, Երևանի տեսարժան վայրեր

Հրաժեշտի երեկո

Մեկնում

Հ Ա Յ Տ
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԴԱՍԸՆԹԱՑԻ



Անուն _____

Ազգանուն _____

Հասցե _____

Ծննդյան թիվ _____

Հեռախոս _____

Էլփոստ, ֆաքս _____

Մասնագիտություն _____

Հետաքրքրություններ _____

Լեզուների տիրապետում _____

Հայոց լեզվի տիրապետում

| | Մակարդակ | | |
|---------------|----------|-------|-----|
| | 0 | Միջին | Լավ |
| Կարդալ, գրելը | | | |
| Խոսակցականը | | | |

Ես ցանկանում եմ մասնակցել Հայոց լեզու և մշակույթ դասընթացներին, որը կազմակերպվում է ՔՀԶԿ-ն և որը տեղի կունենա 2003 թ-ի օգոստոսի 5-ից-24-ը: Դասընթացների արժեքը անփոփոխ է: Այս հայտը հաստատում է դասընթացի իմ մասնակցությունը, եթե կազմակերպության ղեկավարությունը համաձայն է

_____ ամսաթիվ

_____ ստորագրություն

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՋԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՑԻԿ



ՔՀԶԿ-ն պատրաստ է կապեր հաստատելու և համագործակցելու և տեղական և միջազգային կազմակերպությունների հետ

Գրասենյակի հասցե. Աղայան 15. # 17
0009 Երևան, Հայաստան
Փոստային հասցե. Նալբանդյան 49, # 7,
0025 Երևան, Հայաստան
Հեռ: (374-10) 560 544
Ֆաքս: (374-10) 585 677
Էլ.փոստ: info@cdcs.am
Website: http://www.cdcs.am

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ
ՄՇԱԿՈՒՅԹ
(ամառային դասընթացներ)

